# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ




*Մարզկենտրոնը՝*

ք. Վանաձոր

*Տարածաշրջանները՝*

Սպիտակ
Ստեփանավան
Տաշիր
Թումանյան
Գուգարք

*Քաղաքները՝*

Վանաձոր
Ալավերդի
Ստեփանավան
Սպիտակ
Տաշիր
Ախթալա
Թումանյան
Շամլուղ

| | |
|---|---|
| Տարածքը | 3 799 քառ. կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 12.8 % |
| Համայնքներ, 2018թ. տարեսկզբի դրությամբ | 56 |
| Քաղաքներ | 8 |
| Գյուղեր | 122 |
| Բնակչության թվաքանակը 2018թ. տարեսկզբի դրությամբ | 217.4 հազ. մարդ |
| *այդ թվում՝* | |
| քաղաքային | 128.8 հազ. մարդ |
| գյուղական | 88.6 հազ. մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 7.3 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 59.2 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 250 903.9 հա |
| այդ թվում՝ վարելահողեր | 42 038.3 հա |

Մարզում ծովի մակերևույթից բարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղու-թյուններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2017թ. մարզի տնտեսության հիմնական հատված-ների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- ✓ արդյունաբերություն ՝ 8.9%,
- ✓ գյուղատնտեսություն 8.7%,
- ✓ շինարարություն ՝ 4.1%,
- ✓ մանրածախ առևտուր՝ 3.3%,
- ✓ ծառայություններ՝ 1.3%:

Վանաձոր քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 79.3 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բազում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 125 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Սպիտակ քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 12.8 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 97 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1 400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Սպիտակ քաղաքը մինչև 1988թ. արդյունաբերական կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայում քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական կազմակերպություններ, բնակչության մի մասը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 12.5 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1 666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1 375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու մի-ջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի,կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 7.3 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.՝ որպես ռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործում են կաթի վերամշակմամբ զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Ալավերդի քաղաքը (2018թ. տարեսկզբին՝12.8 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր:

Ախթալա քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 2.0 հազ. Բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 1.5 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամլուղ քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 0.6 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ,Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ

%

**տղամարդ – 99 479** **տարիք** **կին -117 884**




## ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը | 1 046 | 939 | 1 002 | 1 010 | 844 |
| *այդ թվում՝* | | | | | |
| խանութներ | 297 | 271 | 324 | 331 | 304 |
| կրպակներ | 691 | 623 | 594 | 597 | 459 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| առևտրի այլ օբյեկտներ | 53 | 40 | 79 | 77 | 76 |

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 |
| Պետական նախադպրոցական | 66 | 64 | 66 | 66 | 94 |
| Պետական հանրակրթական | 167 | 167 | 166 | 166 | 163 |
| Ոչ պետական հանրակրթական | 1 | 1 | - | - | 1 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 22 | 17 | 20 | 20 | 21 |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 8 | 8 | 8 | 8 | 9 |
| Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական | 2 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |

# ՔԱՂԱՔՆԵՐ

| Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ* |
|---|---|
| Վանաձոր | 79 310 |
| Ալավերդի | 12 740 |
| Ստեփանավան | 12 529 |
| Սպիտակ | 12 781 |
| Տաշիր | 7 330 |
| Ախթալա | 1 999 |
| Թումանյան | 1 529 |
| Շամլուղ | 626 |

[1] Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

* ՀՀ քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

# ԳՅՈՒՂԵՐ

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| Գուգարքի տարածաշրջան | | |
| 1 | Ազնվաձոր | 478 |
| 2 | Անտառամուտ | 289 |
| 3 | Անտառաշեն | 249 |
| 4 | Արջուտ | 1 220 |
| 5 | Արջուտ կայարանին կից | 62 |
| 6 | Բազում | 1 381 |
| 7 | Գուգարք | 5 663 |
| 8 | Գյուլլուդարա | - |
| 9 | Դարպաս | 1 820 |
| 10 | Դեբետ | 818 |
| 11 | Եղեգնուտ | 825 |
| 12 | Լեռնապատ | 1 957 |
| 13 | Լերմոնտովո | 883 |
| 14 | Հալավար | 98 |
| 15 | Հայդարլի | 11 |
| 16 | Ձորագետ | 250 |
| 17 | Ձորագյուղ | 250 |
| 18 | Մարգահովիտ | 3 365 |
| 19 | Շահումյան | 2 771 |
| 20 | Վահագնաձոր | 343 |
| 21 | Վահագնի | 1 018 |
| 22 | Փամբակ | 315 |
| 23 | Փամբակ կայարանին կից | 56 |
| 24 | Քիլիսա | - |
| 25 | Քարաբերդ | 83 |
| 26 | Ֆիոլետովո | 1 255 |
| Թումանյանի տարածաշրջան | | |
| 1 | Աթան | 209 |
| 2 | Առողջարանին կից | 14 |
| 3 | Ամոջ | 133 |
| 4 | Բենդիկ | 77 |
| 5 | Ակներ | 577 |
| 6 | Ախթալա | 2 |
| 7 | Ահնիձոր | 172 |
| 8 | Այգեհատ | 195 |
| 9 | Արդվի | 164 |
| 10 | Արևածագ | 802 |
| 11 | Աքորի | 2 540 |
| 12 | Դսեղ | 2 055 |
| 13 | Թեղուտ | 793 |
| 14 | Լորուտ | 1 001 |
| 15 | Ծաթեր | 388 |
| 16 | Ծաղկաշատ | 178 |
| 17 | Կաճաճկուտ | 343 |
| 18 | Քոբեր կայարանի | 24 |
| 19 | Կարմիր Աղեկ | 145 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| 20 | Հագվի | 437 |
| 21 | Հաղպատ | 818 |
| 22 | Ճոճկան | 2 134 |
| 23 | Մարց | 449 |
| 24 | Մեծ Այրում | 878 |
| 25 | Մղարթ | 384 |
| 26 | Նեղոց | 268 |
| 27 | Շամուտ | 256 |
| 28 | Շնող | 2 824 |
| 29 | Չկալով | 167 |
| 30 | Ջիլիզա | 98 |
| 31 | Փոքր Այրում | 244 |
| 32 | Քարինջ | 535 |
| 33 | Քարկոփ | 360 |
| 34 | Օձուն | 4 876 |
| Սպիտակի տարածաշրջան | | |
| 1 | Արևաշող | 2 496 |
| 2 | Գեղասար | 941 |
| 3 | Գոգարան | 1 314 |
| 4 | Լեռնանցք | 1 450 |
| 5 | Լեռնավան | 1 670 |
| 6 | Լուսաղբյուր | 1 121 |
| 7 | Խնկոյան | 337 |
| 8 | Ծաղկաբեր | 1 325 |
| 9 | Կաթնաջուր | 2 001 |
| 10 | Հարթագյուղ | 1 447 |
| 11 | Ղուրսալ | 561 |
| 12 | Մեծ Պարնի | 2 112 |
| 13 | Նոր Խաչակապ | 602 |
| 14 | Շենավան | 487 |
| 15 | Շիրակամուտ | 2 435 |
| 16 | Ջրաշեն | 3 547 |
| 17 | Սարալանջ | 151 |
| 18 | Սարահարթ | 1 341 |
| 19 | Սարամեջ | 1 763 |
| 20 | Քարաձոր | 451 |
| Ստեփանավանի տարածաշրջան | | |
| 1 | Ագարակ | 1 104 |
| 2 | Արմանիս | 339 |
| 3 | Ամրակից | 578 |
| 4 | Բովաձոր | 288 |
| 5 | Գարգառ | 1 388 |
| 6 | Գյուլագարակ | 2 291 |
| 7 | Լեջան | 654 |
| 8 | Լոռի բերդ | 394 |
| 9 | Կաթնաղբյուր | 730 |
| 10 | Կողես | 329 |
| 11 | Կուրթան | 1 711 |
| 12 | Հոբարձի | 705 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** |
|---|---|---|
| 13 | Հովնանաձոր | 45 |
| 14 | Ցաղդան | 72 |
| 15 | Պուշկինո | 352 |
| 16 | Սվերդլով | 1 059 |
| 17 | Վարդաբլուր | 1 307 |
| 18 | Ուռուտ | 935 |
| 19 | Ուրասար | 312 |
| Տաշիրի տարածաշրջան | | |
| 1 | Ապավեն | 115 |
| 2 | Արծնի | 287 |
| 3 | Բլագոդարնոյե | 219 |
| 4 | Գետավան | 65 |
| 5 | Գոգավան | 52 |
| 6 | Դաշտադեմ | 91 |
| 7 | Լեռնահովիտ | 997 |
| 8 | Կաթնառատ | 1 043 |
| 9 | Ձյունաշող | 121 |
| 10 | Ձորամուտ | 334 |
| 11 | Մեդովկա | 346 |
| 12 | Կրուգլայա շիշկա | 132 |
| 13 | Մեծավան | 5 740 |
| 14 | Մեղվահովիտ | 122 |
| 15 | Նորամուտ | 37 |
| 16 | Միխայելովկա | 813 |
| 17 | Նովոսելցովո | 196 |
| 18 | Նորաշեն | 1 325 |
| 19 | Պաղաղբյուր | 117 |
| 20 | Պետրովկա | 213 |
| 21 | Պրիվոլնոյե | 1 041 |
| 22 | Սարատովկա | 329 |
| 23 | Սարչապետ | 1 773 |

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը` համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը`ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը` 01.01.2018թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով` կազմել է +12.2%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2017թ.

| | Ընդա-մենը | *նրանցից`* | |
|---|---|---|---|
| | | կանայք[1] | տղա-մարդիկ[1] |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 406 | 4 594 |
| Ծնվածներ, մարդ | 127 | 59 | 68 |
| Մահացածներ, մարդ | 124 | 62 | 62 |
| Ամուսնություններ | 46 | X | X |
| Ամուսնալուծություններ | 24 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 41.0 | X | X |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ` | | | |
| նախադպրոցական | 235 | 115 | 120 |
| հանրակրթական | 1 349 | 652 | 697 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոց-ներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 114 | 80 | 34 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 23 | 5 | 18 |
| միջին մասնագիտական | 83 | 47 | 36 |
| բարձրագույն մասնագիտական | 168 | 106 | 62 |
| Առողջապահության ոլորտ` | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 40 614 | … | … |
| Մարզիկներ, մարդ | 169 | 26 | 143 |
| Զբաղվածներ, մարդ | 4 401 | 2 202 | 2 199 |
| նրանցից` գիտական հիմնարկներում | - | - | - |
| նրանցից` գիտության դոկտոր | - | - | - |
| գիտության թեկնածուներ | - | - | - |
| ուսուցիչներ | 155 | 132 | 23 |
| բժիշկներ | 23 | … | … |
| միջին բուժանձնակազմ | 50 | … | … |
| Գործազուրկներ, մարդ | 648 | 308 | 340 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 995 | 1 250 | 745 |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 845 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 16 074 | … | … |
| թատրոն | 1 763 | … | … |
| համերգ | 913 | … | … |
| թանգարան | 1 034 | … | … |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 62 | X | X |
| այդ թվում` ոչ մեծ ծանրության | 36 | X | X |
| միջին ծանրության | 19 | X | X |
| ծանր | 6 | X | X |
| առանձնապես ծանր | 1 | X | X |

[1] Ցուցանիշները հաշվարկային են: